«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ 2018-2019 ՈՒՍ.ՏԱՐՎԱ
ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2018-2019 ուս.տարում քոլեջի ուսումնական մասը իրականացրել է քոլեջում գործող կրթական ծրագրերին ու պլաններին համապատասխան գործընթացներ առկա ուսուցմամբ:

Ուսումնական գործընթացը լիարժեք իրականացնելու համար ժամանակին պատրաստ են եղել ուսանողների ցուցակները, ուսումնական մատյանների, դասաբաշխման, ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալի, օրացույցային-թեմատիկ պլանների և այլ ձևաթղթերը:

2018-2019 ուս.տարում կազմվել և ժամանակին պատրաստ են եղել բոլոր մասնագիտությունների դասացուցակները, միջանկյալ ստուգարքների, քննությունների, առարկայական /մոդուլային/ պարտքերի մարման և երկու կիսամյակների ուսումնական ժամանակացույցները:

Կիսամյակների սկզբում ճշտվել են բոլոր կուրսերի ուսանողների ցուցակները, կազմվել են ուսումնական խմբերը:

- Հիմնական ընդհանուր կրթություն I կուրս-101,102 խումբ
- «Դեղագործություն»- II կուրս, III կուրս Ա և Բ խմբեր
- «Ատամնատեխնիկական գործ» II կուրս, III կուրս
- «Քույրական գործ» II կուրս
- «Քույրական գործ» III կուրս
- «Քույրական գործ» IV կուրս

Հաշվետու ուսումնական տարում քոլեջում տարեսկզբին սովորել է 163 ուսանող:

Ցածր առաջադիմության և վատ հաճախումների պատճառով քոլեջից հեռացվել են 10 ուսանող, ազատվել են ուսանողական իրավունքներից համաձայն իրենց դիմումի 11 ուսանող, պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած 1 ուսանող և պարտադիր զինվորական ծառայության մեկնած 2 ուսանող:

Դասղեկների հետ միասին կազմակերպել ենք և անցկացրել խորհրդակցություններ բոլոր կուրսերում՝ կապված ուսումնական գործընթացների հետ: Կազմակերպվել են նաև խորհրդակցություն ավարտական կուրսերի ուսանողների հետ: Ուսանողներին

մանրամասն ներկայացվել է ավարտական ամփոփիչ ատեստավորումների անցկացման ընթացքը, կարգը:

Կազմնակերպվել են շրջանավարտների դիպլոմների և նրանց ներդիրների տպագրման աշխատանքները և շրջանավարտների դիպլոմների բաշխման մատյանի վարումը: Հաշվետու տարում քոլեջն ավարտել են՝

- ✓ ‹‹Դեղագործություն›› մասնագիտությամբ 51 շրջանավարտ,
- ✓ ‹‹Ատամնատեխնիկական գործ›› մասնագիտությամբ 7 շրջանավարտ:
- ✓ «Քույրական գործ» մասնագիտությամբ 4 շրջանավարտ

Բացարձակ գերազանցությամբ քոլեջն ավարտել են 11 շրջանավարտ:

Սահմանված ժամկետներում դիպլոմները և նրանց հավելվածները հանձնվել են շրջանավարտներին:

Երկու կիսամյակների ընթացքում ուսանողները հանձնել են 182 ստուգարք և 32 քննություն:

Տարվա կտրվածքով ամբիոնների ընդհանուր առաջադիմությունը կազմում է 92,13% : Ընդհանուր առաջադիմության բարձր տոկոսը գրանցվել է «Դեղագործություն» մասնագիտությամբ սովորողների մոտ, իսկ ցածրը՝ «Քույրական գործ» մասնագիտությամբ:

Հաշվետու տարում կազմակերպվել և կատարվել է պրակտիկաների անցկացումը: «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության պրակտիկան անցկացվել է «Նյու-Հոփ» ատամնաբուժական կենտրոնում, «Դեղագործություն» մասնագիտության «Վագա - Ֆարմ» ՍՊԸ դեղատանը և քույրերինը «Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոն» :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Քոլեջի ուսումնական մասը 2018-2019 ուս.տարում ապահովել է դասընթացների անխափան կազմակերպումը և անցկավումը, ամբիոնների բնականոն գործունեությունը:
- Անհրաժեշտ է համալրել քոլեջիի գրադարանը մասնագիտական գրականությամբ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԱՐԻՉ՝ **Լ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**